ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-4

ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-23/2 ծածկագրով գնումների էլեկտրոնային (e-Auction) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար վերահսկման և ղեկավարման սարքերի ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղարի 02.06.2023թ. N 182/1-Ա հրամանով ձևավորված գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 22.06.2023թ. ժամը 10-00-ին, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք.Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ա.Իսկանդարյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Ա.Աբրահամյանը, Ս.Դանիելյանը և քարտուղար Գ.Ղազարյանը:

<u>Հայտերի գնահատման արդյունքները հաստատելու մասին</u>

-Գնահատող հանձնաժողովի նախագահ Ա.Իսկանդարյանը տեղեկացրեց, որ գնահատող հանձնաժողովը համաձայն ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-23/2 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 8.11 կետի մեկ աշխատանքային օրով կասեցրել էր հանձնաժողովի նիստը և համակարգի միջոցով ծանուցել էր Atlantic-ին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել հայտում տեղ գտած անհամապատասխանությունները: Atlantic-ն սահմանված ժամկետում համակարգի միջոցով չի շտկել հայտում տեղ գտած անհամապատասխանությունները (Մասնակիցը Հավելված N 1-ում՝ Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում հայտարարության մեջ չի նշել կազմակերպության իրավական կարգավիճակը և մասնակիցը չի ստորագրել Հավելված N 1-ը, իսկ կնիքի առկայության դեպքում նաև պետք է կնքվի դիմում հայտարարությունը, մասնակիցը չի ներկայացրել իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր՝ համաձայն Հավելված N 1.2-ի, ինչպես նաև չի ներկայացրել առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը):

-գնահատող հանձնաժողովը որոշեց՝

1. Համաձայն ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-23/2 ծածկագրով գնման հրավերի 8.11-րդ կետի՝ Atlantic-ի հայտը գնահատել անբավարար և մերժել, քանի որ Atlantic-ն սահմանված ժամկետում չի շտկել հայտում արձանագրված անհամապատասխանությունները:

2" ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-23/2 ծածկագրով գնումների էլեկտրոնային (e-Auction) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն հայտարարել չկայացած:

3. Համաձայն ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-23/2 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 8.15 կետի Atlantic-ի տվյալները համապատասխան հիմքերով՝ պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա, գրավոր ուղարկել լիազորված մարմին, տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ նախաձեռնելու համար («Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետ՝ մասնակիցը խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը):

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ա.Իսկանդարյան

Անդամներ՝ Ա.Աբրահամյան

Ս.Դանիելյան

Քարտուղար՝ Գ.Ղազարյան